№ 12 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 30 **1892** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 30 № 12

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՆԵՐԿԱՅ 1892 ԹԻԱԿԱՆԻՆ

20-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 20-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., մի ամսվանը՝ 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը).

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառին վճարվում է 2 կոպէկ.

«Մշակի» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմիայն լրագիրների յայտարարութիւնները, մահացուցակները և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մահացուցակի տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 ռուբլի:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եկեղեցական ընտրութիւնների գործը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Համոզմունքի փոփոխութիւնը գիւղացիների մէջ. Սովը Ռուսաստանում. Նամակ Ներքին-Ախտայից. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նար-Բէյ եպիսկոպոսի հարցը. Պատրիարքի կօնդակը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ս. Շահազիզեան չափաւորական ասպետի դատի առջև.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸ

—

Մեր եկեղեցական ընտրութիւնների գործը չէ ենթարկվում խիստ և անփոփոխ կանոններին. ընդհանրապէս սահմանադրված կանոններ չը կան, այլ հրատարակված ջոկ ջոկ հրահանգներ մին միւսին հակասում են շատ անգամ: Էջմիածինը մինչև այսօր չէր մշակել մի ընդհանուր կանոնադրութիւն մեր այլ և այլ եկեղեցական ընտրութիւնների համար, այլ մեր թեմական առաջնորդներից իւրաքանչիւրը իր հասկացողութեան համեմատ հրատարակում է այս և այն հրահանգ, որով այսօր պիտի ղեկավարվեն թէ ընտրութիւնների գործին գլուխ կանգնած հոգևորականները և թէ իրանք ընտրողները: Եւ այդ տեսակ հրահանգ հակասում է նախորդ թեմական առաջնորդի հրատարակած հրահանգի իմաստին, հակասում է և միւս հարևան թեմերից իւրաքանչիւրի մէջ հրատարակված հրահանգներին: Օրինակ Ներսէսի և Մակարի ընտրութիւնների ժամանակ Թիֆլիսի իւրաքանչիւր եկեղեցին պարտաւոր էր չորս չորս եկեղեցական պատգամաւոր ընտրել, թեմը 13 հոգի վիճակային պատգամաւորներ պիտի ուղարկէր Թիֆլիս, իսկ ներկայ կաթողիկոսական ընտրութիւններին Թիֆլիսի եկեղեցիների իւրաքանչիւրից հրամայված է ընտրել երեք երեք հոգի եկեղեցական պատգամաւորներ, իսկ թեմի դաւառական քաղաքներից յայտնի էլ չէ մինչև այժմ թէ ինչքան հոգի պատգամաւորներ պիտի գան: Եթէ անցեալ ընտրութիւնների պէս 13 հոգի պիտի գան միայն,—դա կը նշանակէ որ բոլոր գործակալութիւններից չը պիտի գան, ոլովհետև Թիֆլիսի թեմի գործակալութիւնները աւելի բազմաթիւ են. բայց լսվում է ուրիշ կողմից որ 13-ից պակաս էլ պիտի գան,—ուրեմն մինչև անգամ գործակալութիւնների թիւի համեմատ թիւով էլ չեն գայ պատգամաւորներ, այլ կատարելապէս անորոշ թիւով:

Ուրեմն ի՞նչի նախորդ ընտրութիւններում իւրաքանչիւր եկեղեցին չորս չորս հոգի պատգամաւոր էր ընտրում,—իսկ ներկայ ընտրութիւններում՝ երեք երեք հոգի. ի՞նչի, ինչ հիման վրա, նախորդ ընտրութիւններում թեմիս դաւառական քաղաքներից և գիւղերից ընդամենը 13 հոգի էին ընտրված,—իսկ ներկայ ընտրութիւններում, օրքան լսվում է, 13-ից պակաս պիտի գան....

Անհրաժեշտ է, վերջապէս մի հաստատ հիմք դնել այդ ընտրութիւնների գործի համար, հարկաւոր է մի ընդհանուր ընտրողական կանոնադրութիւն մշակել ընտրողական գործը հաստատ և անփոփոխ հիմունքների վրա դնելու համար:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄՈԶՄՈՒՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ՄԷՋ

—

Թէ որքան տխուր հետևանքներ է ունենում տգիտութիւնը, անուսութիւնը գիւղական ամբոխի և հասարակութիւնների շրջաններում,—այդ պէտք է հասկանալ մասամբ նրանից, որ համոզմունքի փոփոխութիւնը հայ գեղջուկների իրական կեանքի երևոյթներից մի տխուր պատկեր է ներկայացնում... Գիւղացին իր համոզմունքը բոպէ ապէս փոխում է, այնպէս, ինչպէս մարդիկ փոխում են իրանց շապիկը... Հաստատ կամքի ու համոզմունքի տէր մարդիկ շատ քիչ են գտնվում գիւղական շրջանում: Դրա համար պակաս չեն օրինակներ:

Մանում էք մի որ և է գիւղացուց ձեր դիտաւորութեան մասին և նա սկսում է պատմել, տեղեկացնել ձեզ իր գիտցածին համաձայն: Իսկ դուք նոյն այդ տեղեկութիւնը ճիշդ եղելութեամբ հասկանալու համար՝ հարցնում էք մի ուրիշ գիւղացուց, դիցուք առաջնի հարևանից, սակայն վերջինս նոյն իրողութեան մասին ասում է ընդհակառակն հաղորդել, և զանազան սուտ ու սխալներով համեմել, անկիրթ գիւղացուն յատուկ փոփոխական բնաւորութեամբ...

Այդ տեսակէտից՝ դուք՝ հիմնվելով ձեր սկզբում ստացած, թէկուզ սխալ տեղեկութեան վրա, երբ կամենում էք, օրինակ, դիտմամբ նախատել, յանդիմանել այդ գիւղացուն, ասելով, որ այդ իսկ գործի մասին նա սուտ է խօսում, որ նրա ասածը հակասում է շատերի պատմածին և որ նա բոլորովին գուցէ տեղեկութիւն չունի նոյն այդ եղելութեան մասին,—այն ժամանակ իսկոյն ձեզ հետ խօսող գիւղացին փոխում է իր խօսքը, սկսում է համաձայնվել ձեզ հետ և լրջապէս փոխելով իր համոզմունքը՝ պատասխանում է ձեզ, ասելով «հա, ձեր խօսքն է, ձեր ասածն է, ես լաւ տեղեակ չեմ այդ բանից»:

Այդ տեսակէտից պարզ է, որ այդպիսի ոստի պէս դալար բնաւորութիւն ունեցող գիւղացիներից շատ դժուար է ճիշդ տեղեկութիւններ ժողովել նրանց նիստ ու կացի և տնտեսական դրութեան մասին:

Հէնց այդ է գուցէ պատճառը, որ հետաքրքրող վճռեն հնագէտները, բայց կարծեմ ոչ ոք չէ կասկածում, թէ այդ աւանդութիւնը սխալ լոյս է գցում մեր նախնիների յարաբերութեան վրա դէպի խորենացին: Ի՞նչ էր այդ կատաղի թշնամութեան պատճառը: Ես պատմաբան չեմ, հաստատ չը գիտեմ այդ, բայց լինձ թվում է, որ մեր նախնիքը խորենացուն չէին կարողանում ներել նրա խստութիւնը (рѣзкость):

Խորենացու ժամանակից դարեր են անցել, ամբողջ աշխարհս կերպարանափոխվել է, բայց մեր չափաւորութեան պաշտամունքը (культъ) մնացել է անյողդողդ: Մեռաւ Հայաստանի ամենամեծ դաւակներից մինը՝ Ս. Նաղարեանց և չափաւորութեան փոքրոգի ասպետները պղծեցին նրա թարմ գերեզմանը պ. Երիցեանի անիմն յօդուածով: Այժմ միտք կայ ծօնել Ս. Նաղարեանի ամենատաղանդաւոր դաղափարակիցներից ու գործակիցներից մէկի՝ պ. Շահ-Ազիզեանի մանկավարժական գործունէութեան երեսնամեայ յօբելեանը և ահա նորից դուրս է գալիս չափաւորութեան մի նոր ասպետ, որն ուզում է զրօի հաւասարացնել Ս. Նաղարեանցի և Ս. Շահ-Ազիզի դաղափարական պրօպագանդայի նշանակութիւնը, որովհետև... որովհետև նրանք իրանց գրուածներում խիստ լեզու են բանեցնում, որովհետև նրանք սաստիկ են սիրում և սաստիկ են ատում:

Այդ նոր ասպետը պ. Ե. Մաղաթեանն է, որը «Մուրճ» ամսագրում քննադատում է պ. Ս. Շահ-Ազիզեանի գրականական գործունէութիւնը: Նա արդէն չորս յօդուած է գրել «Բանաստեղծ-հրապարակախօս» վերնագրով (1891 թ. №№ 3, 7—8 և 12) և սպառնում է 1892 թվին էլ շարունակել: Իմ խօսքս գլխաւորապէս պ. Ե. Մաղաթեանի № 12-ի յօդուածի մասին է: Այդ յօդուածում կրիտիկը քննում է պ. Շահ-Ազիզեանի «Լեոնի վիշտ» գրուածքը կամ աւելի լաւ է ասել այդ գրուածքի հերոսին—Լեոնին: Ի դէմս Լեոնի պ. Մաղաթեան իսկապէս կրիտիկայի է ենթարկում պ. Շահ-Ազիզին, Ս. Նաղարեանին և առհասարակ «Հիւսիսափայլի» ուղղութեան ներկայացուցիչներին ու հետևողներին:

Պ. Մաղաթեան կարող է բողոքել իմ վերջին տողերի դէմ առաջ բերելով այն, որ ինքը տարբերութիւն է դնում (№ 12, եր. 1559) Նաղարեանի և Լեոնի գործողութեան եղանակների, զէնքի և գործունէութեան ենթակայ միութիւնների մէջ. մէկը գործում է գրչով և գործ ունի հասարակութեան հետ, միւսը՝ խօսքով և չփվում է մասնաւոր անհատների հետ:

Ես ուշադրութիւն չը դարձրեցի այդ խօսքերի վրա, որովհետև շատ լաւ գիտեմ, որ պ. Մաղաթեան այն հրապարակախօսներիցն է, որոնք սիրամարդի պէս պոչով իսկոյն ջնջում են իրանց ոտքերի թողած հետքը: Հետևեալ երեսներում պ. Մաղաթեան անալօգիա դնելով Լեոնի և Նաղարեանի մէջ, ինքը մոռանում է իր վերոյիշեալ խօսքերը, որոնք սակայն, իմ կարծիքով, ոչինչ նշանակութիւն չունեն, և ահա ինչու:

Մեծ կրիտիկական սրամտութիւն հարկաւոր չէ հասկանալու համար, որ Լեոնի բերանով խօսում է ինքը բանաստեղծը, որի զէնքը, ի հարկէ, գրիչն է և որը իր խօսքը ուղղում է հասարակութեանը: Պ. Մաղաթեան ինքն էլ այդ լաւ հասկանում է և այդ պատճառով շատ տեղ սկսելով խօսել Լեոնի մասին, շարունակութեան մէջ Լեոնի անունը փոխարինում է հեղինակի անունով: Օրինակ, պ. Մաղաթեան № 3-ում զանազան ցիտատներով աշխատելով ապացուցանել, որ «շատ սուր քննական հայեացք չէ հարկաւոր՝ Շահ-Ազիզեանի հերոսի և Նաղարեանցի միջև համեմատութիւն տեսնելու համար», այդ ցիտատները վերջացնում է հետևեալ խօսքերով. «եթէ բերած օրինակները չեն կարող համարվել զօրաւոր ապացոյցներ Նաղարեանցի և Շահ-Ազիզեանի համերաշխութեան, մենք ունենք այդ մասին նաև «Հիւսիսափայլի» վկայութիւնը»: Հետաքրքրական է այդ վկայութիւնը,—«Մենք առ ի սրտէ ձայնակից ենք Լեոնին և բանաստեղծի գեղեցիկ ու առողջամիտ դաղափարներին», ասում է Նաղարեանց:

Այն կրիտիկը, որը պ. Շահազիզեանին բանաստեղծ-հրապարակախօս անունն է տուել, պէտք է հասկանար, որ «Լեոնի վշտի» հեղինակը դիտաւորութիւն չէ ունեցել պատկերացնել Լեոնին իբրև օբեկտիվ տիպ իր յարաբերութիւնների մէջ մասնաւոր անհատների հետ, այլ օգտվել է բանաստեղծական ձևով իր նուիրական դաղափարները քարոզելու համար: Միթէ պ. Մաղաթեան ենթադրում է, որ Լեոնի խօսքերը ուղղված են այս կամ այն մասնաւոր վաճառականին, հոգևորականին, օրիորդին և ոչ թէ ընդհանրապէս ամբողջ երկու դասակարգերին և բոլոր հայ օրիորդներին: Ես չեմ ուզում այդ աստիճանի միամիտ համարել պ. Մաղաթեանին և այդ պատճառով հարցնում եմ, ապա ինչպէս է լսելի անում Լեոնը իր քարոզը նրանց, միթէ խօսքով և ոչ գրչով:

Վերջապէս՝ եթէ պ. Մաղաթեան պնդի, որ ինքը խօսում է Լեոնի մասին և ոչ թէ հեղինակի, ինքն իրան շատ տարօրինակ դրութեան մէջ կը դնի: Այդ ինչ տաք բանակռիւ է «заднимъ числомъ»: Երևակայեցէք, ընթերցող, որ ռուսաց գրականութեան մէջ մէկը այժմ վեր կենայ և

քրվողներից չատերը, երբ ցանկանում են այցելել, պատել այս և այն գիւղը հասարակական-զեղջկական կեանքի ուսումնասիրութեան համար՝ իրանց դիտաւորութեան մասին երբեմն սխալ տեղեկութիւններ են ստանում և այդպիսով խոշոր սխալներով են դասաւորում իրանց արկածները գիւղական կեանքից։ Իսկ այդ դէպքում, ի հարկէ, մեղաւորը նոյն այդ այցելուն, այդ հետաքրքրվողը չէ, այլ գիւղական հասարակութիւնն է, որի բերանից լսվում են նոյն այդ տեղեկութիւնները...

Եթէ մեր գիւղացիները հաստատ կամքի ու համոզմունքի տէր մարդիկ լինէին, այն ժամանակ նրանցից չատ բաների մասին կարելի կը լինէր ճիշդ տեղեկութիւններ ունենալ։

Գ. Ս.

ՍՈՎԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ռուսաց «Русскія Вѣдомости» թերթում կարդում ենք. «Մինչև 1-ը դեկտեմբերի 1891 թ-ի արքունի գանձարանից Ռուսաստանի սովեալների օգտին բաց թողված է 55 միլիոն բուբլի, որից 24 միլիոնը միմիայն հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներում։ Իսկ վերջին պաշտօնական տեղեկութիւնների հիման վրա, այդ օժանդակութիւնը մինչև յունվարի 1-ն էր՝ 72,690,000 բուբլի, այսինքն վերջին դեկտեմբեր ամսում բաց թողված գումարի քանակութիւնն էր՝ 17 միլիոն բուբլի, որը և բաժանված էր միմիայն 14 նահանգների աղքատակութեան մէջ։ Սակայն—ուելացնում է վերոյիշեալ թերթը—չը նայած այդպիսի առատաձեռն օգնութեան, այնու ամենայնիւ, անհրաժեշտ են դարձեալ նորանոր օգնութիւններ տէրութեան կողմից։ Եւ ճշմարիտ, 17 նահանգներում, ուր գլխաւորապէս տեղի է ունեցել սովը, պաշտօնական տեղեկութիւնների հիման վրա, ուտելու համար ամսական հարկաւոր է 9,922,000 պուդ հաց, որովհետև օժանդակութեան մատակարարութիւնը ենթադրվում է մինչև յուլիսի 1-ը ընթացող տարվայ, այսինքն դեռ ևս 6 ամիս,—կը նշանակէ, ուրեմն միմիայն ուտելու համար հարկաւոր է 59,500,000 պուդ հացի պաշար։ Ուելացնելով դրա վրա և 37,430,000 պուդ ցորենը, որը հարկաւոր է ցանքի համար, կը տեսնենք, որ մինչև յուլիսի 1-ը պէտք է պատրաստի ունենալ 97 միլիոն պուդ հաց, ժողովրդին սարսափելի աղետից ազատելու համար։ Բայց որովհետև դրանցից 47 միլիոնն արդէն առնված է, կը նշանակէ հանելով այդ գումարը 97 միլիոն գումարից, կը ստանանք 50 միլիոն, որը և հարկաւոր է ձեռք բերել մինչև յուլիսի մէկը»։

Հաշուելով մի պուդ հացի գինը 1 բ. 50 կ. (զանազան ծախսերով մինչև նրա տեղ հասցնելը), կը տեսնենք, որ տէրութեան մինչև յունվարի մէկն արած բոլոր ծախսերը հաւասարվում են միմիայն այն օժանդակութեան կէսին, որը պէտք է անել՝ փրկելու համար սովատանջ ժողովրդին նրա ներկայ ծանր ճգնաժամից։

Ղ.

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱԽՏԱՑԻՑ

—

Յունվարի 23-ին

Թէ այստեղ և թէ շրջակայ քանի մի գիւղերում այլ և այլ վարակիչ հիւանդութիւններ են երևում։ Օրինակ, մի գիւղում տիրում է «փորահարինք», միւսում «գրոռ» և այլն։ Այդ հիւանդութիւններից «գրոռ» կոչված ցաւն աւելի է տանջում հիւանդներին, որը չատ սաստիկ քորվում է և մի և նոյն ժամանակ կարմիր բշտիկներ դոյացնում հիւանդների մարմնի վրա։ Այդպիսի սարափելի հիւանդութիւնների առաջն առնելու համար ռամիկ գիւղացիները, բժշկական ոչ մի միջոց չը գտնելով՝ ստիպված են դիմել պառաւական զանազան դեղերի օգնութեան և Աստուծու նախախնամութեանը...

Վերջին ժամանակները Ռուսաստանի սովեալներից այս կողմերն էլ են երևում։ Այդ գաղթականները իբրև աղքատներ՝ ժողովարարութեամբ միայն կարողանում են իրանց օրվայ պարէնը հայթայթել և իրանց «ողորմեցէք աղքատ գաղթականներիս» դառնահնչիւն խօսքերով՝ մի ցաւալի տպաւորութիւն են գործում ամենի վրա։ Սակայն այս կողմերի ժողովուրդն իր կօպէկական նուէրներով հազիւ թէ կարողանայ նպաստել նրանց անտեսական խղճալի դրութեանը։

Անցեալները մեղանում եղանակը բաւական բարեխառն էր, օրերը տաք և ձիւնը հալվում էր։ Այժմ եղանակը սկսել է ցրտել և ձիւնը բաւական խորութեամբ նստել է, որն արգելից ֆուրգօնների երթևեկութիւնը արքունական ճանապարհի վրա, անդին վնասներ հասցնելով սայլապանութեամբ պարապող քրէհատարներին։ Ճանապարհը կառքերի և ֆուրգօնների համար անանցնելի է մանաւանդ Սևանի ծովափում գտնված սարերի լանջերից, այն է՝ «Քալլա-մինարա» բարձրադիր տեղից և «Մաշտոցներ» կոչված անցքից, ուր ամբողջ ձմեռվայ ընթացքում բուք ու բորան է լինում, ճանապարհորդներ են խեղդվում և բեռնված ապրանքներ դէպի ծովը գլորվում... Հարկաւոր է լաւ ուշադրութիւն դարձնել ճանապարհի յիշեալ տեղերի վրա։

Կենսական մթերքների գները մեղանում չափաւոր են։ Ցորենի պուդը ծախվում է 65 կոպէկ, գարիինը՝ 35 կ.։ Թխած հացի ֆունտը արժէ 3 կ., իսկ հալած իւղի ֆունտը արժէ 25 կ., ձուն մինը 1 կ., իսկ շաքարը ծախվում է ֆունտը 17 կ.։ Թանգ բան համարեա թէ չը կայ բացի վառելու ցախից, որի սաժէնն արժէ 25 բուբլի, այն ինչ ուրիշ տարիներ ցախի մի սայլը ծախվում էր 2—3 բ., կամ չատ չատ 4 բ., որը մի քառորդ սաժէնի է հաւասար։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, յունվարի 26-ին

Աւելորդ չեմ համարում ամսիս 26-ին Զգրաշէն եկեղեցում կատարած ընտրութեան մանրամասնութիւնները հաղորդել, գաղափար տալու համար ծխական ընտրութեան մասին։ Պատարագից յետոյ, նախագահ քահանան՝ տէր-Սարգիս Աղաջանեանց կարդաց առաջնորդական կանոնները, որից յետոյ սկսվեց ծխականների անունների ընթերցումը։ Իր անունը լսող ծխականը շարժվում էր բաղմութեան միջից և ատեանի առաջ գալով անցնում էր միւս կողմը, ուր պատրաստ դրված էր ստորագրութեան համար, ժողովի առաջարկութեամբ, մի թերթ։ Ստորագրում էր ծխականը և եղը քաշվում։ Այս կարգով անցաւ ամբողջ ժողովուրդը, թւով 124 հոգի։

Ստուգութիւնը և, այսպէս ասած, ժողովրդագրութիւնը այդ կերպ անելուց վերջը, անմիջապէս անցանք տոմսակներ կամ թերթիկներ բաժանելու գործին։ Աբուլեանց տէր Գէորգ քահանան սկսեց նորից քաղել անուանացուցակը. ձայնված ծխականը առաջ էր գալիս, ստանում էր նախագահ քահանայից մի տոմսակ, ընտրելիների անունները գրելու համար և ապա ստորագրելով արձանագրութեան թերթի վրա՝ յետ էր քաշվում։ Այդպէս, նորից թւահամարվեց ժողովուրդը. տոմսակներ ստացան 118 հոգի. ուրեմն ժողովը թողել գնացել էին 6 հոգի։

Թւով միայն 132 տոմսակ կար ձեռքի տակ, բոլորը ստորագրված և թւահամարված. նախ խաղաթղթի նման խառնվեցան տոմսակները և ապա երեսը դէպի տակը բաժանվեցան ժողովականներին։ Նախագահի ձեռքին մնաց չը բաժանված տոմսակ 14 հատ։

Ընտրագրութեան գործը կատարված, ժողովականները հրաւիրեցին իրանց միջից երեք հոգու՝ ընտրվածների անունը և քուէների թիւը նշանակելու համար։ Տոմսակները բաց անող և կարդացողը նախագահ քահանան էր։ Բացված տոմսակների թիւն էր 118։

Ահաւասիկ ընտրութեան արդիւնքը. Աւետիք Միսայէլեան Եղեկանց՝ 64 ձայնով, Անտոն Սղոմոնեան Ղօրղանով՝ 63 ձայնով, Իշխան Նապոլէօն Ամատունի՝ 52 ձայնով։

Չորրորդ անձը, որ ստացաւ քուէների նշանաւոր բազմութիւն, դա բժ. կարապետ Ստեփանեանցն էր, 49 ընտրական քուէ։

Գործողութիւնը տևեց իբր 3 ժամ

Ա. Ե.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Յունվարի 6-ի աղետից վնասված ընտանիքների օգտին հետևեալ անձինք ուղարկեցին մեզ հետևեալ գումարները. Գօրիսից Յովհ. Դանիէլեանց 1 բուբլի, Թիֆլիսից վրացի Միխայիլ Սխիրլաձէ 3 բ., վրացի Գիգօ Մայսուրաձէ 1 բ., Գէորգ Սուքիասեանց 5 բ., ռուս Ր. Դ. 1 բ., Վաղարշակ Համբարձումեանց 1 բ., Յովհաննէս Օհանեան 50 կոպէկ, Յովսէփ Թաթուլեանց 50 կոպէկ, Ասխաբադից Ա. Շահբազեանց 10 բ., Եալտայից պ.պ. Յարութիւն Բէրբինեան և Խաչակ Յակոբեան միասին 9 բուբլի։ Այդ պարոնները խնդրում են գումարի կէսը յատկացնել աղետի տեղի վրա խաչ դնելու գործին, սակայն այդ միտքը անիրագործելի լինելով, ստիպված ենք ամբողջ ինն բուբլին յատկացնել թշուառացած ընտանիքների օգնութեան գործին։ Ուրեմն ընդամենը կունենանք 32 բուբլի, իսկ նախկին 1603 բ. 58 կ. գումարի հետ, ունենք այժմ 1635 բուբլի, 58 կոպէկ։

—

Մենք լսում ենք հաստատ աղբիւրից, որ հեռացրել են քննութեան ժամանակ Թիֆլիսի հայոց կօնսիստորիայի երկու անդամներին իրանց պաշտօնից։

—

Յոգուտ յունվարի 6-ի աղետից վնասված ընտանիքների ստացանք Բագուից, պ. Արսէն Կրասիլնիկեանից, փոքրիկ շրջանում հաւաքված 250 բուբլի։ Նուիրատուների ցուցակը կը տպագրենք հետևեալ համարում։ Ուրեմն նախկին 1635 բ. 58 կ. գումարի հետ, ունենք այժմ 1885 բուբլի 58 կոպէկ։

—

Ցայտնում ենք «Մշակին» բաժանորդ գրվել ցանկացողներին, որ այսօրվանից կարող են գրվել միմիայն 11 ամսով. այսինքն փետրվար ամսից, քանի որ յունվար ամսի «Մշակի» համարներից չատերը արդէն սպառվել են։ Փետրվարից մենք աւելի մեծ քանակութեամբ կը տպագրենք լրագրի համարները։ Փետրվարից, այսինքն 11 ամսով գրվողները, պիտի վճարեն 9 բուբլի։

—

Օրիորդ Դ. Սուսանեանց նուիրել է յոգուտ յունվարի 6-ի աղետից վնասվածների մի կուպօն

չանթեր արձակի Զացկու դէմ («Горе отъ ума»), թէ ինչու նա «մեծամիտ ոճով» է խօսում, ինչու «վարդապետելու անպատկառ յաւակնութիւն ունի», ինչու «բարեկիրթ չեն, անվայել են նրա մանները» (պ. Մաղաթեանի խօսքերն են)։ Ես համոզված եմ, որ այդպիսի ասպետին գրկաբաց կընդունէին միայն կօմեդիաների հեղինակներն ու զաւեշտական թերթերի խմբագիրները և իսկոյն կը կնքէին նրան նոր Մոլչալին անունով։

Ցեսնենք ինչ մեղադրանքներ է բարդում պ. Մաղաթեանը Լեոնի վրա։

«Համանման պատճառները առաջ են բերում համանման հետևանքներ. ինչպէս յաջողութիւն չունեցաւ Նաղարեանց, այդպէս էլ չէր կարող յաջողութիւն ունենալ Լեոնը։ Անկարելի է կասկածանքի ենթարկել Լեոնի գաղափարների մաքրութիւնը, նրա ուղղամտութիւնը, նրա ձգտումների ազնուութիւնը, բայց չէ կարելի համակրութեամբ վերաբերվել և նրա մեծամիտ ոճին, նրա վարդապետելու անպատկառ յաւակնութեանը, անվայել մանր ներին... երբ չը կայ այդ (հիմնաւոր) գիտութիւնը, երբ չը կայ այդ անձնուիրութիւնը, մեծամտութեամբ վարդապետողը երևան է հանում միայն իր մտքի անբովանդակութիւնը և իր բարոյական ոչնչութիւնը. նա ջուր ծեծող է, նա ֆրազեօր է, որ խօսում է ոչ թէ գործին ճշմարիտ օգուտ բերելու, այլ իր արտիստիկական տաղանդով, իր դիալեկտիկական ընդունակութիւններով փայլելու համար։ Անկեղծութիւնը պահանջում է խոստովանել, որ Լեոնը հէնց այդ տեսակ ֆրազեօրի տպաւորութիւն է անում, թէև նրա խօսքերի նպատակը անկասկած բարի է... Իւր ուսուցչի (Նաղարեանցի) նման Լեոնը սիրում է առանց ցաւի արմատը որոնելու, սրան և նրան նախատել ու պարսաւել, դատափետել ու մեղադրել, անտես անելով համեստութեան և քաղաքավարութեան կանոնները... Եւ այդպէս վայր ի վերոյ է լինում մարդուս դատողութիւնը, երբ իրական յարաբերութիւնները լուրջ, հիմնաւոր և բազմակողմանի ուսումնասիրելու փոխարէն, նա վստահանում է իր կարճ տեսողութեան կամ վատ երևակայութեան վրա։ Բայց որքան էլ անտաքտ են Լեոնի յարձակումները մեր գեղեցիկ սեռի ներկայացուցիչների դէմ, նրանց հետ խօսելիս նա գոնէ յարգում է պատշաճի պահանջները։ Շատ աւելի անտաքտ և նոյն իսկ տարդի է Լեոնի վարվողութիւնը հայ վաճառականների հետ... Բայց կարող ենք հոպահանջել, որ հայ հոգևորականութիւնը, որպէս կրօնական համայնք, արժանանայ մի քիչ աւելի մեղմ ձևերի մէջ ամփոփված մեղադրութիւնների, թէկուզ այդ մեղադրութիւնները բանաւոր հիմք ունենան։ Դժբաղդաբար մեր հերոսը այստեղ էլ ձևերի կատարեալ անընտրողութիւն է ցոյց տալիս, ազգադրուժ, կղերիկոսի սաղմոսերգութիւնը, քստութեան կանչիւնի փողարկող իմաստակ, ընչասէր, անկրօն—ահա ինչ մարգարտաչար ածականներ է ընծայում Լեոնը հայ հոգևորականութեանը՝ այդ հոգևորականութեան մի նախկի մեծանուն ներկայացուցչի բերանով... Խոստովանենք, որ ամենաօգտակար գաղափարն անգամ, Լեոնեան ձևերով արտայայտված, սպասածներիս հակառակ պտուղներ կարող է տալ. այդ սովորեցնում է մեզ պատմութիւնը, այդ ասում է մեզ մեր առողջ դատողութիւնը, այդ հաստատում է մեզ մեր ամենօրեայ փորձը... Մեր հրէշաւոր յանձնապաստանութեամբ, մեր անզուսպ, անդուռն, սանձարձակ բերանով զրգռում ենք ժողովրդի կրքերը, շարժում ենք նրա մէջ զայրոյթ ու ատելութիւն մեզ դէմ և բնականաբար և մեր մտքերի դէմ... և երբ իւր անտաքտութիւններով նա (Լեոնը) կանգնեցնում է իւր դէմ ամբողջ հասարակութիւնը և ինքը մնում է մենակ, ինչպէս մարգարէն անապատում, էլի երևակայում է թէ իր ամբողջ մեղը այն էր միայն, որ «շատ խօսեց, քիչ գործեց»... Իսկապէս նա ոչինչ չը գործեց և չէր էլ կարող գործել...»

Ահա պ. Մաղաթեանի կրիտիկան։

Մենք, ի հարկէ, կարող էինք նկատել սալօնական մանրերների ջատագովին, որ հակասութիւն է մեղադրել Լեոնին այն խիստ խօսքերի համար, որոնց վրայից մի քանի դաւность է անցել, և հէնց այդ մեղադրանքը ամփոփել խիստ խօսքերի մէջ։ Բայց իմ տեսակէտից այդ հակասութիւնը պ. Մաղաթեանին պատիւ է բերում։ Երևում է որ մեր չափաւորութեան ասպետ քննադատն էլ երբեմն ենթարկվել է Լեոնի «կորովի և անկաշառ լեզուի ազդեցութեանը, որ միշտ պատրաստ է հարուածել չարը, կեղծն ու անիրաւացին» (պ. Մաղաթեանի խօսքերն են նրա մասին)։ Ափսոս որ այդ ազդեցութիւնը խոր չէ եղել, այնպէս որ պ. Մաղաթեան այժմ բոլորովին «ուրացել է հօր խաչը» և դարձել է Լեոնի վերաբերմամբ, ինչպէս ռուսներն ասում են, «не помнящій родства»։

Երկար կանգ չենք առնի նոյնպէս և պ. Մաղաթեանի այն խօսքերի վրա, որով նա Լեոնին մեղադրում է, թէ ինչու չը միացաւ Շանչեանի հետ։ Մենք պ. Երիցեանից լսել էինք, որ Նաղարեանց պէտք է աշակերտէր Շանչեաններին այնպէս, ինչպէս որ սոխակը պէտք է երգելու դասեր առնէր աքաղաղից, բայց պ. Մաղաթեան նսեմացրեց մինչև անգամ յայտնի հնագէտի փառքը։ Պ. Մաղաթեան առաջարկում է սոխակին կօնցերտ տալ աքաղաղի հետ։ Այդ, խոստովանում ենք, շատ խոր միտք է, բայց մի քիչ անյարմար է իրագործելու համար։

Այդ երևելի միտքը արդէն բաւական է ապացուցանելու համար, թէ կրիտիկ լինելու յաւակնութիւն ունեցող պ. Մաղաթեան որքան ընդունակութիւն ունի հասկանալու հասարակական երևոյթները։ Պակաս կուրիոզ չեն ներկայացնում և կրիտիկի հետևեալ խօսքերը.—«Հիւսիսափայլը զօրեղ կուսակցութիւն չը ստեղծեց... և վաղ թէ ուշ պիտի դառնար անգոյն, պատահական յօդուածների ժողովածու»։ Ոչ, պ. Մաղաթեան, Նաղարեանցի օրգանը ամեն բան կարող էր դառնալ, բացի անգոյն, պատահական յօդուածների ժողովածու լինելուց, և յամենայն դէպս ձեր կրիտիկայի տենդենցիայով յօդուած երբէք տեղ չէր կարող գտնել Նաղարեանցի խմբագրած ամսագրում, ինչ դրօշակի տակ էլ որ ուզենար այդպիսի յօդուածի հեղինակը անցկացնել «Հիւսիսափայլի» մէջ իր տենդենցիան։ Նաղարեանց համոզված մարդ էր, նա ունէր իր գաղափարական «սրբութիւն սրբոցը»,—այդ բաւական և միակ դրաւականն է անգոյնութեան դէմ։

Եթէ պ. Մաղաթեան մի բան ապացուցանում է իր յօդուածներով, այդ այն է, որ ինքը պ. Մաղաթեան բոլորովին անընդունակ է կրիտիկ լինելու։

Ահա թէ ինչու։

(Կը շարունակվի)

սովեաներեի համար հրատարակած վիճակախաղութեան։

—

Արտասահմանի մի լրագիր իր մի համարում իրան թոյլ էր տուել թշնամական ակնարկութիւններ անել Խրիմեան հայրիկի և նրա անցեալ գործունէութեան դէմ, աւելացնելով մի և նոյն ժամանակ, որ Հայրիկը չունի այն արժանաւորութիւնները, որոնք հարկաւոր են Էջմիածնի գահի վրա բարձրանալու համար։ Մենք միանգամայն աւելորդ ենք համարում հերքել լրագրի ասածները, որովհետև Հայրիկը պաշտպանութեան կարօտ չէ. նրա պաշտպանութիւնը՝ իր գործերն են և ամբողջ հայութեան սրտաբուղխ սէրը։ Միայն խորհուրդ կը տանք այդ թերթին աւելի զգոյշ լինել, և անմիտ կերպով չը դիպչել հայ ժողովրդի այն զգացմունքներին, որոնք կապված են Խրիմեանի անուան հետ։

—

«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ մինիստրների յանձնաժողովի վճռի հիման վրա, ներքին գործերի մինիստրութիւնը պարտաւորվում է պարբերաբար հասցնել տեղեկութիւններ յանձնաժողովին այն մասին, թէ որքան հաց է տրված ժողովրդին իւրաքանչիւր շաբթվայ ընթացքում իւրաքանչիւր նահանգում, թէ որքան հաց է առնված նորից և որքան է մնում չը բաժանված. իսկ ֆինանսների մինիստրութիւնը պարտաւորվում է հեռագրական տեղեկութիւններ հաղորդել հացի գնի մասին զանազան տեղերում, մանաւանդ հացի գլխաւոր շուկաներում։

—

Տիկին Մակ-Գախանի «Русск. Вѣд.» լրագրում տպագրած յօդուածից իմանում ենք, որ հիւսիսային Ամերիկայի շտատներում առ այժմ ժողովված է յօգուտ Ռուսաստանի սովատանջների 170,000 պուդ հաց, ու զանազան երկաթուղային ընկերութիւններ արդէն խօսք են տուել ձրիաբար հասցնել այդ բոլորը մինչև երկրի ափը և որ պատգամաւորների ժողովին առաջարկված է մի բիլլ, որով ծովային մինիստրը լիազօրվում է իր ձեռքի տակ գտնված նաւերով այդ բոլոր նուիրատուութիւնները հասցնել Ամերիկայից Ռուսաստանի նաւահանգիստները։

—

Յունվարի 27-ին, յօգուտ Ռուսաստանի սովեաների և յունվարի 6-ի աղետից վնասվածների աղքատ ընտանիքների օգտին Թիֆլիսի Արքունական թատրոնում, տրվեց մի փառաւոր ներկայացում՝ կոնցերտ-օպերա։ Կոնցերտային բաժինը թոյլ անցաւ, իսկ «Հրէուհի», «Էրնանի» և «Հուգենոտներ» օպերաներում տիկին Ֆլաչա և պ. Վանդերիկ ահագին աջողութիւն ունեցան, հասարակութեան մեծ զուարճութիւն պատճառելով։ Թատրոնը կատարելապէս լի էր։

—

Ցաւելով պէտք է նկատենք, որ Թիֆլիսի ժողովարանում յօգուտ յունվարի 6-ի աղետից վնասվածների կայացած կոնցերտին շատ քիչ հասարակութիւն էր եկել։

—

Այսօր, հինգշաբթի օր, Թիֆլիսի նահանգական դատարանում, առաւօտեան 10 ժամին, պէտք է քննվի Խ. Մալումեանի դէմ Ս. Սպանդարեանի տուած գանգատի գործը։

—

Ուրբաթ օր, ամսիս 24-ին, Թիֆլիսի Արքունական թատրոնում, ռուսաց դրամատիկական խումբը, ի նպաստ տաղանդաւոր դերասանուհի օրիորդ Զվեզդինչի, ներկայացրեց «Чадъ Жизни», հեղ. Մարկեվիչի, հինգ գործողութեամբ դրաման։ Թատրոնը լի էր բաղմութեամբ, և մինչև անգամ թատրոնի անցքերը լցված էին հանդիսականներով։ Բարձր դասակարգին պատկանող Օլգա Բանցեվայի դերը օրիորդ Զվեզդինչ, իրան յատուկ տաղանդով կատարեց, որի համար և վարձատրվեց հանդիսականների բուռն ծափահարութիւններով և մօտ 10 թանգագին ընծաներով։

—

Մեզ հեռագրում են ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ, որ այդտեղ կատարված եկեղեցական պատգամաւորների ընտրութիւնները՝ անվաւեր են համարված։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Ամսիս 25-ին, հայոց Բարեգործական ընկերութեան Բաթումի ճիւղի փոխ-նախագահ, Դ. Խարազեանի աշխատութեամբ մի թատրոնական ներկայացում տրվեց տեղիս ցիրկում, յօգուտ նոյն ընկերութեան։ Ներկայացումից զուտ արդիւնք դոյացաւ մօտ 500 ռուբլի։ Ժողովրդի մեծամասնութիւնը բաղկացած էր պ. Մանթաշեանի երեք գործարաններից գործակատարներից, արհեստաւորներից և մշակներից։ Այդ գործարանների ընդհանուր կառավարիչ նոյն ինքն պ. Խարազեանն է, որը և անցեալ տարի նոյնպիսի ներկայացում կայացրեց։»

—

Մենք լսում ենք, որ սխալ է այն լուրը, իբր թէ «Հայուհեաց Բարեգործական» ընկերութիւնը իր տուած պարահանդէսի ընդհանուր եկամտից, այսինքն 3,000 ռուբլուց յատկացրեց 10% յունվարի 6-ի աղետից վնասվածների օգտին, այլ զուտ արդիւնքից 10%։ Ուրեմն նա յատկացրեց ոչ թէ 300 ռուբլի, այլ շատ շատ 100 ռուբլի։

—

«Մշակի» անցեալ համարում տպված Թիֆլիսի եկեղեցական պատգամաւորների անուանացուցակի մէջ մի քանի սխալներ մտան։ Օրինակ Ս. Նշան եկեղեցում ընտրված է ոչ թէ Կ. Կանդուրալեան, այլ Բ. (Բարսեղ) Կանդուրալեան։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, թէ ի նկատի ունենալով Թիւրքիայի և Պարսկաստանի հետ ունեցած առևտրական յարաբերութիւնների զարգանալը, Վարշավայի առևտրական դպրոցում ներկայումս մուծված է թիւրքաց և պարսից լեզուների դասաւանութիւնը։

—

Արտասահմանեան հայոց լրագիրները հաղորդում են, որ հայր Ղևոնդ Ալիշանի առողջութիւնը այժմ դէպի լաւն է գնում։ Ինչպէս յայտնի է, մեր հռչակաւոր ուսումնականը ինֆլուէնցայով էր հիւանդացել։

—

Մոռացմամբ անցեալ անգամ չը յիշեցինք, որ Բարեգործական ընկերութեան վերջին նիստում խորհրդի փոխ-անդամներ ընտրվեցան՝ պ. Կ. Զալալեան և Տ. Նաղարեան։

—

Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական ընկերութեան անդամները հրաւիրվում են ներկայ լինել փակ նիստին, որ լինելու է փետրվարի 30-ին, երեկոյեան 7½ ժամին։ Պարապմունքի առարկաներն են. 1) Հերթական գործերը և 2) Զեկուցումն Թիֆլիսի այգեգործական դպրոցի նոր կառուցված շինութիւնների մասին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՐ-ԲԷՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱՐՑԸ

—

Ներկայ համարում տպագրվում է՝ Կ. Պոլսի հայոց Աչըգեան պատրիարքի կօնդակը, խորէն Նար-Բէյ եպիսկոպոսի դէմ։

Իսկապէս գործին անծանօթ մարդը՝ այդ կօնդակից ոչինչ չի հասկանայ։ Դրանից միայն այն է երևում, որ պատրիարքը զրկում է Խորէն Նար-Բէյին իր բոլոր պաշտօններից և իրաւունքներից նրա «չարաշահութեան» համար, թողնելով ապագայ հայոց կաթողիկոսին զրկելու Նար-Բէյին նոյն իսկ իր եպիսկոպոսական կոչումից, քանի որ պատրիարքը այն իրաւունքն ինքը չունի։

Որպէս զի ընթերցողը հասկանայ թէ ինչի մէջն է գործը, առաջ ենք բերում Կ. Պոլսից ստացած մի նամակից հետևեալը.

«Գուցէ և հեռագիրը ծանուց ձեզ Խորէն արքեպիսկոպոս Նար-Բէյի հրաժարեցումը ամեն վարչական և եկեղեցական-կրօնական պաշտօններէ և իրաւունքներէ։

«Բարձր համարուած շրջաններու մէջ հետևեալ կերպով կը բացատրուի, որուն համաձայն է նաև պատրիարքական կօնդակը, որ երէկ կարդացուեցաւ բոլոր եկեղեցիներուն մէջ։

«Խորէն եպիսկոպոսը և իր եղբօրորդին (Լուսինեան իշխանի ապօրինի ոչ հարազատ որդին) պալատի լրտեսութեան պաշտօն ունին եղեր մինչև 1889-ի յուլիսի դէպքերը, երբ Լեոն բէյ խոյս կերթայ Փարիզ և հոն իր լեզուն կը փոխէ, Ֆրանսերէն լրագիրներու մէջ սուլթանի անձի դէմ նախատական յօդուածներ գրելով, թէև ի սկզբան պալատի շահերը պաշտպանելու համար հոն զրկուած է եղեր։ Խորէնի կովկասէն դարձին (անցեալ տարի) պալատի լրտեսապետը Լեոն բէյի յօդուածները Խորէնին ցուցնելով, կառաջարկէ նրան խրատել իր եղբօրորդին. Խորէն քանի մը նամակներ կը խմբագրէ, ցոյց կը տայ լրտեսապետին և ապա Լեոն բէյին կը յղէ։ Այդ ծառայութեան փոխարէն սուլթանը 25 ոսկի թոշակ կը կապէ, որ մինչև վերջին օրերս սրբազանը ստանալով հանդերձ, չը ստանալ կը ձևանար և լուր էր տարածած, թէ առաջին անգամուն իսկ մերժած էր այդ առաջարկը, առարկելով թէ ինքը եկեղեցու, ժողովրդի հովիւը և քարոզիչը լինելով, այնտեղէն կը սպասէ իր վարձատրութիւնը և թէ գոհ է արդէն իր ստացածովը։ Խորէն սրբազան այդ թոշակով չը գոհացած՝ նոր աղբիւր կը փնտռէ շահու և ահա իր ազդեցութեան շնորհիւ արքունիքի ներքին կեանքի վերաբերեալ տեղեկութիւններ քաղելով, կը հաղորդէ իր փարիզեան եղբօրորդուն «Temps»-ի մէջ հրատարակելու, որմէ և, իբրև թղթակցի վարձ, բաւական դումար մը ստանալ կը յաջողի։ Վերջերս մինչև անգամ եգիպտական դրծերու վերաբերեալ գաղտնի պահուած լուր մը կը հաղորդէ։ Այս ամեն անյայտ կը մնայ մինչև յունուար 8-ի մօտերը, երբ իրեն վերջին նամակը ոստիկանութեան ձեռքը կը հասնի. իսկոյն կը կանչվի քննութեան, ուր ամեն բան կը խոստովանի և իրեն կարդացնել, ըսելով թէ փորձութեամբ ըրած է այդ, թէ կարիք ուներ դրամական և այլն և այլն. իրեն կառարկեն (նոյն իսկ ոստիկանութեան նախարարը), թէ դրամի պէտք չէր կարող ունենալ, քանի որ վաղուց է արդէն որ ոչ միայն ամսական 25 ոսկի կը ստանայ, այլ և միշտ արքունիքէն կընդունի իր կերակուրը, և մերթ ընդ մերթ նա մեծաքանակ դումարներ կընդունի իբրև նուէր վեհ. սուլթանէն։

«Այդ քննութեան ներկայ կը գտնուին և պատրիարքարանի կողմէն ուղարկած երկու աշխարհական և երկու եկեղեցական, որոնք ամեն բան կը լսեն վարագոյրի մը յետին ծածկուած, թէև Խորէն Նար-Բէյ խնդրած էր, որ ամեն բան ծածուկ մնայ, պատրիարքին ոչ մի բան յայտնուի, և ինչ պատիժ որ պիտի դրուի՝ պետութեան կողմէն լինի։ Ահա Խորէն սրբազանի խնդիրն այս դոյներով հրապարակ ելաւ—զուտ չահախնդրութեան, կամ «չարաշահութիւն» կօնդակի լեզուով։ Կօնդակը կըսէ նաև ի միջի այլոց թէ առ ժամանակ է այդ կարգադրութիւնը, և թէ նորընտիր կաթողիկոսին պիտի ներկայացուի խնդիրը արժանապէս պատժելու համար, քանի որ ինքը պատրիարքը ձեռնհաս չը նկատէր իրեն կարգընկեց ընելու եպիսկոպոս մը։»

Կ. ՊՕԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿՕՆԴԱԿԸ

—

Յունվարի 19-ին Կ. Պոլսի եկեղեցիների մէջ կարդացվեցաւ Աչըգեան պատրիարքի հետևեալ կօնդակը.

Խորէն ծառայ Յիսուսի Քրիստոսի և շնորհիւ Սուրբ Հոգւոյն պատրիարք Կոստանդնուպօլսոյ և վերատեսուչ ամենայն վիճակացն, սուրբ եկեղեցեաց Աստուծոյ որ ի մայրաքաղաքիս, բարեխրատ քարոզչաց, աւագերիցանց, պատուարժան թաղական խորհրդոց և համօրէն եկեղեցականաց և ժողովրդականաց ողջոյն և օրհնութիւն կալ և մնալ միշտ պահպանեալ ի շնորհս և ի խնամս Հոգւոյն Սրբոյ, ամէն։

Գիտութիւն լիցի սիրելեացդ իմոց զի Խորէն եպիսկոպոս Նար-Պէյ, Պէշիկթաշի քարոզիչն որ եկեղեցական կարգապահութեան հակառակ վարմանց մէջ գտնուելով՝ այլ և այլ առթիւ այս մասին իրեն եղած աղդարարութեանց չէր անսար, վերջին օրերս ալ ամենածանր յանցանաց մէջ գտնուած է լոկ ի պատճառս չարաշահութեան։ Ցանցանքին ծանրութիւնը, պարագայներն ու նպատակը պաշտօնապէս ծանօթ են Պատրիարքարանիս, որք դժբաղդաբար բնաւ արդարանալի կողմեր չունին, և արդէն իւր իսկ խոստովանութեամբ հաստատուած են, և դառնապէս կը վշտացնեն թէ իւր եկեղեցական սուրբ և բարձր կարգի սեփական ազնուութիւնն և թէ մարդկային իսկ հասարակ պարկեշտութիւնն։ Ուստի ցաւ ի սիրտ պարտաւորեալ եմ ի պահպանութիւն պատուոյ եպիսկոպոսական բարձր կարգին և ի փարատումն դայթակղութեան ի մտաց ժողովրդեան դադարեցուցանել վերոյիշեալ եպիսկոպոսն Պէշիկթաշի Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ քարոզչութենէն և արգելուլ զինքն առ այժմ իւր հոգևոր կարգին յատուկ բոլոր պաշտամանց գործածութենէն ի մեծաց մինչև ի փոքունս։ Եպիսկոպոսական աստիճանին բարձրութիւնը ընդհանրական Հայրապետի վերին հեղինակութեան ենթարկեալ հանդամանք ունենալով՝ իւր մասին վերջնական տնօրինութիւն վերապահեալ կը մընայ յապագայ ժամանակի հրամանի նոյն հոգևոր գերիշխանութեան։

Մեր այս տխուր և տրտմալից տնօրինութիւն ծանուցանելով առ հասարակ բոլոր պաշտօնէից եկեղեցւոյ և համօրէն ժողովրդեան՝ կը խնդրեմ աղօթել առ Աստուած որ կարգապահ և հաւատարիմ եկեղեցականութիւնն պահէ ի փորձութենէ ի շինութիւն հաւատացելոց և ի փառս մեր միայնոյ առաքելական Սուրբ եկեղեցւոյ, ամէն։

Տուեալ ի պատրիարքարանի հայոց 1892 յունուար 16։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լէրկէս-Գիւղի մօտ աւազակային խմբի յարձակման պատճառով, թիւրքաց կառավարութիւնը Ադրիանուպօլի զինուորական դատարանի առաջ պատասխանատուութեան ենթարկեց 566 հոգի։ Դատարանի վճռի համաձայն, որ տեղի ունեցաւ յունվարի 16-ին (28-ին), 446 մարդիկ արդարացան, իսկ 121 հոգի զանազան պատիժների ենթարկվեցան։

—Հանքագործների գործադուլի շնորհով գործերի դրութիւնը հիւսիսային Սպանիայում շատ ծանր է, որովհետև աշխատանքները դադարած են բոլոր հանքերում, և ոստիկանութիւնը ստիպված է պահպանել ամայացած շինութիւնները։ Յունվարի 15-ին (27-ին) ամբողջ նահանգը պաշարման դրութեան մէջ է յայտնված։

—Պարիզից հեռագրում են, որ մաքսային նոր տարիֆների պատճառով այնտեղ բարձրացան ապրանքների գները։ Ամեն կողմից գանգատներ են լսվում թանգութեան դէմ։

—Բերլինից հեռագրում են, որ դպրոցական նոր օրինագծի դէմ սկսված ագիտացիան շատ զօրեղանում է։ Ֆրանկֆուրտում և Վիսբադէնում միտինգներ են կազմվում այդ օրինագծի դէմ բողոքելու համար։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յունվարի։ Նիժեգօրոդեան գաւառի մի քանի տեղերում բացվում են ճաշարաններ։—«Новое Время» լրագիրը ցանկալի է համարում, որ արդէն տեղի ունեցող օրինակներին հետևելով, հունձ ունեցող տեղերի բարի բնակիչները հրաւիրէին իրանց մօտ սովեալներին և կերակրէին, որոնք իրանց կողմից կարող են բանել նրանց համար, և որ այդ տեսակ օգնութիւնը աւելի լայն ծաւալ գտնէր, բարեգործական այնպիսի հիմնարկութիւնների աջակցութեամբ, ինչպիսին է Կարմիր խաչի ընկերութիւնը։

ՍԻՄԲԻՐՍԿ, 27 յունվարի։ 52 գիւղերում բացված են ճաշարաններ, որտեղ՝ սովեալները, մեծ մասամբ երեխաներ, ծերեր և հիւանդներ ստանում են հաց և տաք կերակուր։

ՆԻԻ-ԵՕՐԿ, 27 յունվարի։ Երէկ, առաւօտեան 3 ժամին այստեղի «Hôtel-Royal»-ի մէջ հրդեհ պատահեց և անասելի արագութեամբ տարածվեց։ Քնից արթնացած մնկեցների մէջ սկսվեց իրարանցում. գիշերային շորերով նեղա փրկութիւն էին որոնում, պատուհաններից վայր թռչելով։ Մի ժամում ամբողջ հիւրանոցը ոչնչացնող հրդեհին, բացի ծանր վէրքեր ստացողներից, զոհ գնացին մինչև 100 մարդ։

ԼԵՐԵՎԱՆ, 27 յունվարի։ Արգելված է գաւառից հաց արտահանելը։

ՎԻԵՆՆԱ, 27 յունվարի։ Կայսերական զինուորական մինիստրը հրամայեց քննել զինուորների հետ վատ վարվելու գործերը, ի նկատի ունենալով այն գործերը, որոնք անցեալ տարի դատաստանական քննութեան ենթարկվեցան աւստրո-ունգարական զօրաբանակում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յունվարի։ «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ Խաղաղ-Օվկիանոսի նաւատորմը այս տարի կը բաղկանայ 11 պատերազմական մեծ նաւերից, չը հաշուելով թնդանոթակիր և ուրիշ օժանդակ նաւերը։

ՊԵՏՐՕԶԱՎՕԴՍԿ, 28 յունվարի։ Նահանգապետի բողոքի պատճառով՝ նահանգական զեմստվոյի ժողովը յետաձգեց զրամական նուէրների բաշխումը, որ նշանակել են գաւառական զեմստվոների ժողովները՝ զեմստվոներում ծառայողների համար։

ԱԹԷՆՔ, 28 յունվարի: Թագաժառանգ իշխանուհի Սօֆիա հիւանդացաւ ինֆլուէնցայով:

ԲԷԼԳՐԱԴ, 28 յունվարի: Ազատամիտ կուսակցութեան 12 պատգամաւորների Նատալիա Թագուհու աքսորի մասին արած հարցման՝ մինիստր-նախագահ Պաշիչ պատասխանեց, որ աքսորը օրինական էր, հիմնված լինելով Թագաւորական իշխանութեան և սկուպշչինայի համաձայնութեան վրա, և որ զինուորական ույժը միմիայն անկարգութիւնների առաջն էր առնում Թագուհու ճանապարհ ընկնելու միջոցին: Սկուպշչինան հաւանութիւն տուեց մինիստրի բացատրութեանը:

ԼՕՆԴՕՆ, 28 յունվարի: Այսօր պարլամէնտը բացվեց գահական ճառով, որի մէջ յիշված է եգիպտոսի խէդիվի մահը, ասելով, որ դրանով Թագուհին զրկվեց ազնիւ դաշնակցից, և որ Թագուհին այնու ամենայնիւ յոյս ունի, որ ժառանգն էլ կը հետևի նոյն հեռատես քաղաքականութեան: Ճառի մէջ յիշատակված է և այն, որ ներկայացվելու է օրինագիծ, որը վերաբերում է Իրլանդիայում ինքնավարութիւն մտցնելուն՝ անգլիական սիստեմի նման:

—

ՍՈ. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ.

Յունվարի 28-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . .	101 ր.	45 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	49 »	70 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	40 »	$22^1/_2$ »
Ոսկի — — արժէ . .	8 »	13 »
Մաքսային կուպօններ — . .	162 »	75 »

Արծաթ — — — . .	1 »	19 »
Բօրսային դիսկօնտներ — . .	$5^1/_4$ »	$6^1/_2$ »
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի . .	103 »	12 »
— — — — 2-րդ —	103 »	— »
— — — — 3-րդ —	— »	— »
— — — — 4-րդ —	— »	— »
— — — — 5-րդ —	— »	— »
— — — — 6-րդ —	102 »	87 »
6% ոսկեայ ռէնտա	166 »	— »
4% ոսկեայ փոխառութիւն. . . .	— »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— »	— »
— — — 2-րդ —	102 »	50 »
— — — 3-րդ —	103 »	50 »
Ներքին 5% առաջին փոխառուժ.	236 »	50 »
— — երկրորդ —	226 »	— »
Պետական. երկաթուղային ռէնտա.	104 »	75 »
$5^1/_2$ ռէնտա	— »	— »
4% ներքին փոխառութեան . . .	94 »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	103 »	— »
Ազն. կալ. բանկի խաղարկութեան գրաւ. թղթ. — — .	198 »	— »
$5^1/_2$% վկայակ. գիւղ. հող. բանկի.	104 »	75 »
$4^1/_2$% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մեառլ. .	152 »	50 »
— — — թղթադ. .	102 »	37 »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները. .	101 »	62 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101 »	— »
Օդէսայի — — .	101 »	50 »
Թիֆլիսի — — .	98 »	75 »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	102 »	25 »
— — Քութայիսի — .	102 »	25 »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է:

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան (և տառմնացաւի) սիֆիլիսի և աչքացաւի
Դ. Գ. ՌՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Մ. Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—$11^1/_2$—12 ժ. կանանց և երեխայոց ց.
Մ. Զ. ՔԱՆԱՆԵԱՆ—12—$12^1/_2$ ժ. կանանց ց. և մանկաբարձութեան:
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի ց.
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—$12^1/_2$—1 ժ. ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Բ. ԱԼԵԿՍԷԵՎ—5—6 ժ. նեարդային ց. և էլեկտրաբուժութեան:
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երեխայոց և ներքինց.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ.
Ա. Ա. ԶԱԴՕՄՍԿԻ—6—7 ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժութեան.
Վճար—50 կ.: Համախորհրդի (կօնսիլիումի) համար առանձին:

7—52 (հ) Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ Նաւասարդեան

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Հ. Ց. ՕՐԲԷԼԻ

Սօլօլակսկայա փողոց, սեփական տանը №№ 15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ { առաւօտեան 8 ժամից մինչև 10 ժ. և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ.

Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ: 15—150

ПАРФЮМЕРІЯ
ВИКТОРІЯ — РЕГИНА.
мыло олео-вазелиновое
РОЯЛЬ — КОНГО.
духи высшаго достоинства
ИКСКОРОНАКСЪ И ВІОЛЕТЪ.
О-ДЕ-КОЛОНЪ РОЯЛЬ
О-ДЕ-КОЛОНЪ ЦВѢТОЧНЫЙ
РАЗНЫХЪ — ЗАПАХОВЪ.
Въ Высочайше утвержденномъ Кавказкомъ Товариществѣ торговли аптекарскими товарами въ Тифлисѣ и Баку.

ՊԱՐՖԻՒՄԵՐԻ
ՎԻԿՏՕՐԻԱ-ՌԵԳԻՆԱ
Օլէօ-վազելինեան սապօն
ՌՕՅԱԼ-ԿՕՆԳՕ
ամենաբարձր տեսակի
անուշահոտութիւններ
ՌՕՅԱԼ ու ՎԻՕԼԷՏ
ԻՍԿՕՐՕՆԱԿՍ
Օդէկոլոն ծաղկահոտ
ՕԴԷԿՕԼՕՆ ՌՕՅԱԼ
ԶԱՆԱԶԱՆ ՀՈՏԵՐԻ
Դեղագործական ապրանքների վաճառման Հաստատված կովկասեան Բարձրագոյն ընկերութեան մէջ Թիֆլիսում և Բագւում.

36—50 (հ)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտնում է, որ իր բնակարանում, եթէ կը ներկայանան երկու կամ աւելի առնողներ, կը կայանայ ազատ գնով վաճառումը նախկին Տէր-Մկրտչեանի տան, որտեղ առաջ գետեղվում էր կովկասեան ինտենդանտութիւնը: Կալուածքը գտնվում է Թիֆլիսի 9-որդ քաղաքամասում, Նիկօլաեվսկայա փողոցում և բաղկացած է 4 յարկանի տնից, ֆլիգէլներով և ունի $836^1/_2$ սաժէն տարածութեամբ գետին: 1—3

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
MESSAGERIES MARITIMES
(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՕՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 7/19 փետրվարի դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ TIGRE (ՏԻԳՐ) շոգենաւը, նաւապետ NIEL (ՆԻԷԼ) դէպի Կ. Պօլիս, Մարսէլ, Հավր, Լօնդօն, մտնելով և միջանկեալ նաւահանգիստները:

Ագէնտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ՝ ՄԱԼԱՎԱՁԻ, ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ, իսկ ԲԱԳՈՒԻ մէջ՝ ԳՕԼԴԼՈՒՍ: 1—2



ՄԻՋՈՑ ԽԱՐԲՈՒԽԻ ԴԷՄ

բժշկական դեպարտամենտից թոյլատրված

ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ

ծախվում է 40 կոպէկով

Դեղագործական Ապրանքների Վաճառման կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլիսում: 13—40

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՉԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ առևտրական հաշւարարութիւնը առանց ուսուցչի օգնութեան ուսումնասիրելու համար:

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տոկոսների լիակատար աղիւսակներով, 1-ից մինչև 10,000 ռուբ. համար. 1%-ից մինչև 12%. Վաճառվում է եղբարց Ծովիանովների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ. Тифлисъ, Нагорная ул., № 9. Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցէով С. П. Мануэльянцу.

Գինն է 1 ռուբլի: փօստի ծախս 21 կ. Գրավաճառներին զիջում կը լինի: 65—150

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԷՎԷԼԻՆԱ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ վէպ (հոգեբանական էտիւդ).

Գինը 50 կոպէկ (պօստի ծախսով)

Ծախվում է. „Մշակի" խմբագրատանը, կենտրոնական և Խիտչէկելի գրավաճառանոցներում և Միքայէլեան կամուրջի վրա գտնվող Յովհաննէսօվի գրավաճառանոցում. 17—20

Գլխաւոր պահեստը գտնվում է Թիֆլիսում և Բագւում Բարձրագոյն Հաստատված դեղատան ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մօտ:

47—50 (·2)

ԻՍԿԱԿԱՆ ԲԷՆԶՕՅԵԱՆ ՍԱՊՕՆ ԴՕԿՏՕՐ ԼԷՆԳԻԼԻ ՎԻԷՆՆԱՅՈՒՄ

ԾԱԽՎՈՒՄ Է ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՒ ՊԱՐՖԻՒՄԵՐԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՆԵՐՈՒՄ

2—7 (ամսի 30)

Дозволено цензурою, Тифлисъ, 29 Января 1892 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.